# ՀԶՈՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

| Ծրագիր/գործունեութ-յուն | Նպատակը | Նկարագրություն | Իրականացման ժամկետը | Ֆինանսավոր-ման աղբյուրը/ պատվիրատուն |
|---|---|---|---|---|
| Հանրակրթության իրականացում ուսուցման կազմակերպման համագործակցա-յին եղանակով | Բարձր արժեքային համակարգ և ապագայի մարտահրավերնե-րին դիմակայելու պատրաստ, ուժեղ քաղաքացիների պատրաստում | Սևան համայնքում ուսուցման կազմակերպման համագործակցային եղանակով կազմակերպ-վել է հանրակրթական ուսուցում 6-8 տարեկան երեխաների համար: Ուսուցման առանձնա-հատկություններից են. -յուրաքանչյուր աշակերտի համար կազմվում է անհատական ուսումնական ծրագիր, որը նա յուրացնում է իրեն անհրաժեշտ ժամանակահատվածում, - ուսումնական պրոցեսի ընթացքում աշակերտը և' սովորում է, և' սովորեցնում, որն ավելի է ամրապնդում նյութի յուրացումը, - ուսումնական գործընթացը բաժանված չէ դասաժամերի և ուսումնական նյութը յուրացնելու համար չկա ժամանակի սահմանա-փակում - մեծ ուշադրություն է հատկացվում աշակերտի հոգևոր և մշակութային զարգացմանը, ուսումնական խմբի անդամների միջև թիմի ձևավորմանը | Սկսած 2007թ սեպտեմբերից | ՀԶՀ հիմնադրի ներդրումներ, համայնք (ծնողներ) |
| Վանաձոր քաղաքի մանր և միջին առևտրի կետերի ծավալների և ծառայությունների մոնիտորինգ, քարտեզագրում | ՀՀ խոշոր քաղաքների առևտրի կետերի ծավալների և մատուցվող ծառայությունների մոնիտորինգ | Վանաձոր քաղաքի մանր և միջին առևտրի կետերի ղեկավարության հետ հարցազրույցների կազմակերպում, տվյալների ամփոփում, քարտեզագրում | 2008թ. հունվար | Մոսկվայի հետազոտութ-յունների ինստիտուտ |
| ՀՀ Լոռու մարզի երիտասար-դության շրջանում հետազոտության կազմակերպում | ՀՀ երիտասարդության ազգային զեկույցի կազմում | ՀՀ Լոռու մարզի երիտասարդների վիճակի, հետաքրքրությունների, պահանջների և խնդիրների բացահայտման նպատակով հարցազրույցների, ֆոկուս խմբերի կազմակերպում տարբեր համայնքերում | 2006թ. փետրվար | ՀՀ Երիտասար-դության նախա-րարություն, փորձագիտա-կան խումբ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՀՀ-ում փախըս-տականների վիճակի մասին ազգային զեկույցի կազմում | ՀՀ Գեղարքունիքի և Լոռու մարզերում փախստականների վիճակի և խնդիրների բացահայտման լայնածավալ հետազոտության կազմակերպում | ՀՀ Գեղարքունիքի և Լոռու մարզերի փախստականներով բնա-կեցված գյուղերում հետազոտություն (հարցազրույցների, ֆոկուս խմբերի կազմակերպում տարբեր տարիքի ու սեռերի համապատասխան թիրախի հետ) | 2006թ. սեպտեմբեր | Դանիական փախստականն երի խորհուրդ, ՔՐԻՆԳՈ ցանց |